Հայտարարություն

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար ուսումնական մոդուլներ մշակելու և ըստ դրանց դասընթացներ կազմակերպելու մասնագիտական/ուսումնական ծառայության հրավեր

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացնող կոնսորցիումը (այսուհետ՝ Ծրագրի կոնսորցիում) հայտարարում է Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար **ուսումնական մոդուլներ մշակելու և ըստ դրանց դասընթացներ կազմակերպելու մասնագիտական/ուսումնական ծառայության հրավեր**:

<u>«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի մասին</u>

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն՝ ղեկավար կազմակերպությունը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ հանդիսացող իր գործընկերների՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրըլ Յուրըփ» չեխական ՀԿ-ի հետ համատեղ իրականացնում է **«Կառուցողական երկխոսության հանձնառություն»** ծրագիրը, որը նպատակ ունի՝ ամրապնդելու քաղաքացիական հասարակության ձայնը և երկխոսությունը կառավարության հետ:

Ծրագիրը մեկնարկել է *2016 թվականի դեկտեմբերին* և ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Ծրագրի տևողությունը 34 ամիս է: Ծրագրի հիմնական նպատակը ՔՀԿ-ների ազդեցության ուժեղացումն է հանրային քաղաքականությունների գործընթացի վրա, իսկ առանձին նպատակներն են ՔՀԿ-ների կարողությունների ուժեղացումը կոալիցիաների կառուցման գործում և քաղաքականությունների շուրջ կառուցողական ու ռազմավարական փոխգործակցությունը կենտրոնական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործընկերների հետ:

ՔՀԿ-ների կարողությունների զարգացման երկարաժամկետ ֆորմալ մեխանիզմների ապահովման նպատակով մրցութային կարգով ընտրվելու է ոլորտում գործող առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն, որը պետք է ունենա համապատասխան մասնագիտական փորձառություն և փորձագետներ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) համար ծրագրով նախատեսված **ուսումնական մոդուլները մշակելու և ըստ դրանց դասընթացներ կազմակերպելու** համար: Դասընթացների արդյունքում ՔՀԿ ներկայացուցիչներին բուհի կողմից կտրվեն ավարտական հավաստագրեր: Դասընթացների ավարտից հետո դրանց կայունությունն ապահովելու նպատակով ընտրված բուհը **ծրագրի շրջանակներում մշակված ուսումնական մոդուլներին համապատասխան ծրագրի ավարտից հետո նույնպես պետք է շարունակի ՔՀԿ-ների համար** նմանատիպ դասընթացների անցկացման մշտական պրակտիկան՝ արդեն վճարովի հիմունքներով:

Համագործակցություն այլ ծրագրերի հետ

Նպատակ ունենալով համապարփակ և շարունակական կերպով զարգացնել ՔՀԿ-ների կարողությունները՝ ծրագիրը համագործակցում է «ՔՀ կամուրջ» ծրագրի հետ, որը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից և իրականացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության և Եվրասիա Համագործակցության Հիմնադրամի կողմից: «ՔՀ կամուրջ» ծրագիրը հայկական սփյուռքին հնարավորություն է տալիս՝ աջակցելու հայկական ՔՀԿ-ների զարգացմանը: Որպես այս նախաձեռնության տրամաբանական շարունակություն՝ այս համագործակցության շրջանակներում կհայտարարվի ՔՀԿ-ների կառավարման դասընթացների և դրանց անցկացման սերտիֆիկացված փաթեթի պատրաստման մրցույթ:

Տեխնիկական առաջադրանք

Ընտրված բուհը պետք է անցկացնի դասընթացներ Երևանի և մարզերի ՔՀԿ-ների համար, որպեսզի ուժեղացնի նրանց կարողությունները հետևյալ ոլորտներում՝ *պետական բյուջեի հատկացումների և քաղաքականությունների իրականացման մշտադիտարկում, հանրային քաղաքականությունների մշակման համար կարևորագույն խնդիրների հատկորոշում, ըստ դրանց՝ հանրային քաղաքականությունների վերլուծություն և մշակում, կոալիցիաների կառուցում և քաղաքականությունների շուրջ կառուցողական ու ռազմավարական փոխգործակցություն կենտրոնական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործընկերների հետ:* Դասընթացը բաղկացած է լինելու երկու մոդուլներից:

Դասընթացի առաջին մոդուլ

Դասընթացի առաջին մոդուլի տևողությունը 5 օր է, յուրաքանչյուր օրը՝ 8 ժամ տևողությամբ: Դասընթացի առաջին փուլը կմեկնարկի ***2017 թ. նոյեմբերի 20-ին*** և կավարտվի ***2018 թ. փետրվարին***: Դասընթացի առաջին փուլին մասնակելու է ՔՀԿ-ների 7 խումբ: Յուրաքանչյուր խումբ բաղկացած է լինելու 15 ՔՀԿ ներկայացուցչից:

Ընդհանուր առմամբ, դասընթացին մասնակցելու է 100 ՔՀԿ ներկայացուցիչ: Նախատեսվում է, որ մասնակիցներից 60-ը կլինեն Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերից, իսկ մնացյալ 40-ը՝ Երևանից և հարակից մարզերից:

Մրցույթում հաղթող ճանաչված բուհը դասընթացի առաջին մոդուլի շրջանակներում մասնակիցներին պետք է ուսուցանի հետևյալ չորս հիմնական թեմաները.

1. **Պետական բյուջեի հատկացումների և քաղաքականությունների իրականացման մշտադիտարկում,**

2. **հանրային քաղաքականությունների խնդիրների հատկորոշում, փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակում և վերլուծություն, հանրային քաղաքականությունների իրականացում,**
3. **ՔՀԿ-Կառավարություն և ՔՀԿ-ՏԻՄ երկխոսության ձևավորում,**
4. **ՔՀԿ-ների կոալիցիաների կառուցում և զարգացում**:

Դասընթացն ավարտելուց հետո մասնակիցները պետք է տիրապետեն կոալիցիաներ կառուցելու և զարգացնելու ամբողջ գործընթացի հմտություններին, որպեսզի դասընթացի ավարտից հետո ինքնուրույն կարողանան ստեղծել կոալիցիաներ: Ուսուցանվող բոլոր հմտություններն ու թեմաները պետք է փոխկապակցված լինեն միմյանց հետ:

<u>Դասընթացի երկրորդ մոդուլ</u>

Դասընթացի երկրորդ մոդուլը պետք է անցկացվի ***2018 թ. մարտին*** ՔՀԿ-ների կոալիցիաների համար: Դասընթացի երկրորդ մոդուլի տևողությունը 5 օր է, յուրաքանչյուր օրը՝ 8 ժամ տևողությամբ: Դասընթացին կմասնակցեն 20 ՔՀԿ ներկայացուցիչներ:

Դասընթացի այս մոդուլի շրջանակներում մասնակիցները կանցնեն խորացված ուսուցում հետևյալ թեմաներով՝ ***փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակում և վերլուծություն, կայուն և կառուցողական ՔՀԿ-Կառավարություն երկխոսության ձևավորում***: Բուհը պետք է անցկացնի խորացված ուսուցումը՝ կիրառելով այն հմտություններն ու գործիքները, որոնք պահանջվում են արդյունավետ հանրային քաղաքականությունների մշակման և վերլուծությունների անցկացման, ինչպես նաև հանրային քաղաքականությունների պաշտպանության արշավներ կազմակերպելու համար՝ օգտագործելով բոլոր հնարավոր մեխանիզմները:

Բուհը դասընթացի յուրաքանչյուր մոդուլի վերաբերյալ Ծրագրի կոնսորցիումին պետք է ներկայացնի միջանկյալ և վերջնական հաշվետվություններ՝ ներառյալ մասնակից կազմակերպությունների և դրանց ներկայացուցիչների տվյալները, մասնակիցների քանակը, տարիքը և սեռը, ինչպես նաև կոնսորցիումի կողմից պահանջվող այլ տեղեկություններ:

Սույն մրցույթին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունները (բուհ):

Հետաքրքրված կառույցները պետք է ներկայացնեն սույն հայտարարությունում նշված մրցութային փաթեթը, որպեսզի Ծրագրի կոնսորցիումը գնահատի դիմորդների համապատասխանությունը սույն մրցույթում մասնակցության պայմաններին:

Մրցութային փաթեթը պետք է բաղկացած լինի՝

- Բուհի ղեկավարության կողմից Ծրագրի կոնսորցիումին ուղղված նամակից առ այն, որ բուհն ունի բոլոր կարողությունները ու ռեսուրսները (ենթակառուցվածքային, մարդկային, կազմակերպչական, փորձագիտական,

նմանատիպ կարողություններ ունեցող ՔՀԿ-ների հետ համագործակցության փորձ և այլն) նմանատիպ ծառայություն մատուցելու համար,

- Դասընթացի առաջին և երկրորդ մոդուլների 5-օրյա ուսուցումների բովանդակության ու մեթոդաբանության հակիրճ (ոչ ավելի, քան 10 էջ) նկարագրից,
- Դասընթացի կուրսի բովանդակությունը կազմող և վարող մասնագետների/փորձագետների կենսագրականներից (CV/resume),
- Դասընթացների կազմակերպման վայրի/տարածքի, մասնակիցների սննդի ապահովման, ինչպես նաև մարզային մասնակիցների կեցության ապահովման մասին տեղեկատվությունից,
- Ծառայության ընդհանուր արժողությունից ու բյուջեի հիմնական տողերի բացվածքից,
- Նախորդ նման փորձի օրինակներից, եթե այդպիսիք առկա են։

Մրցութային փաթեթն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2 հասցեով (մուտքը՝ բակի կողմից) մինչև սույն թվականի ***նոյեմբերի 6-ը՝ ժամը 18.00-ն:*** Մրցութային փաթեթը պետք է կազմված լինի հայերեն, իսկ փաստաթղթերը պետք է տեղադրված լինեն բուհի լիազոր ներկայացուցչի կողմից ստորագրված և կնքված փակ ծրարի մեջ։

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել Իրավաբանների հայկական ասոցիացիայի գնումների հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանին՝ զանգահարելով 010 58 02 98 հեռախոսահամարով:

Հայտերը բացվելու են ***2018թ. նոյեմբերի 7-ին***: